ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» հունիսի 2014թ. N_____Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱ Հ.5 ՇԵՆՔԻ Հ.21 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ՝ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 1/3 ՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Գայի պողոտա հ.5 շենքի 50.9քմ մակերեսով հ.21 բնակարանի՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող 1/3 մասը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ասյա և Կարինե Դարբինյաններին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱ Հ.5 ՇԵՆՔԻ Հ.21 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ՝ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 1/3 ՄԱՄՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ասյա և Կարինե Դարբինյանները դիմել են Երևանի քաղաքապետարան՝ Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտայի հ.5 շենքի հ.21 բնակարանի՝ Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 1/3 մասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 20.02.2014թ. N20022014-01-0183 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) խնդրանքով:

Քննարկվող բնակարանի 1/3 մասը պատկանել է Ահարոն Գասպարյանին, վերջինիս մահից հետո բնակարանի մյուս բնակիչները թեև փաստացի տիրապետել են գույքը, սակայն իրեն պատկանող մասը ճանաչվել է անժառանգ և 17.02.2014թ. ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա սեփականության իրավունքով փոխանցվել է Երևան համայնքին:

Համաձայն «Նոր Նորք 2/6» համատիրության 05.03.2014թ.-ի տեղեկանքի՝ վերոհիշյալ բնակարանը փաստացի տիրապետում են Ասյա և Կարինե Դարբինյանները, որոնք հանդիսանում են մնացած 2/3 մասի սեփականատերերը:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման ղեկավարի 30.04.2014թ. հ.ԿԽ-2/2952 գրության համաձայն՝ Նոր Նորք, Գայի պողոտա, հ.5 շենքի հ.21 բնակարանը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով գրանցված է քաղաքացիներ Ասյա Դարբինյանի (1/3) և Կարինե Դարբինյանի(1/3) անվամբ:

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի ք. Երևան, Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտայի հ.5 շենքի հ.21 հասցեում գտնվող բնակարանի 1/3 մասի անհատույց օտարման համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևան քաղաքի ավագանու որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱ Հ.5 ՇԵՆՔԻ Հ.21 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ՝ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 1/3 ՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գայի պողոտա հ.5 շենքի հ.21 հասցեում գտնվող բնակարանի՝ Երևան համայնքի սեփականություն համարվող 1/3 մասն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱ Հ.5 ՇԵՆՔԻ Հ.21 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ՝ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 1/3 ՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գայի պողոտա հ.5 շենքի հ.21 հասցեում գտնվող բնակարանի՝ Երևան համայնքի սեփականություն համարվող 1/3 մասն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ